I

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՍԻԱՅԻ» ՄԱՍԻՆ*

ՌԱԱ ակադեմիկոս Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

IV

Ինչպիսի՞ գործունեություն ծավալեց «քաղաքակիրթ» օսմանյան պետությունը XIX դարում և XX դարի սկզբներին՝ իր գոյության վերջին շրջանում։ Համառոտ կերպով կանգ առնենք նաև այդ հարցի վրա։

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության քայքայումը և սնկումը կանխելու, ինչպես նաև սուլթանական պետության երբեմնի հզորությունը վերականգնելու նպատակով Բ. Դուռը XIX դարի սկզբին և հաջորդ տասնամյակներին փորձեց իրականացնել մի շարք ռեֆորմներ, որոնք, սակայն, հիմնականում վերաբերելով բանակին, պետական կառուցվածքին ու վարչական բնույթի հարցերին, չփոխեցին, չբարելավեցին հպատակ ժողովուրդների ու ազգությունների ծանր վիճակը։ Սուլթանական բռնապետության կեղեքումները, դաժան հալածանքներն ու կոտորածները շարունակվեցին նոր թափով։

Ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ Օլիվիեն, որ XIX դարի սկզբին այցելել էր Կրետե կղզի, գրում էր, որ այնտեղի «քրիստոնյաների հունձքը շարունակ հափշտակում է թուրք կառավարիչը, սեփականությունը գրավում է փաշան, մինչդեռ ենիչերիները մշտապես անարդում են ու ծեծում դգանակով... և այդ բոլորը տեսնելով ու ապրելով՝ հույն երկրագործները բնականաբար չունին եռանդ, ցանկություն զարկ տալու արդյունադործությանը, հողը մշակելուն, քանի որ արդյունքը պետք է անցնի իրենց ատելի տարրի ձեռքը... Նրանց՝ քրիստոնյաների դաշտերը ավերվում են օրեցօր, ձիթենին փչանում է, խաղողը ոչնչանում»[1]։

Հունական ազատագրական շարժման պատմությանը նվիրված իր գրքում Գ. Արշը նշել է, որ XVIII դարի վերջին և XIX դարե սկզբներին Հունաստան ճամփորդած ականատեսները չեն պատկերացրել, թե որևէ այլ երկրում «կարող է գոյություն ունենալ այդքան վայրենի դեսպոտիզմ և այդքան դաժան ստրկություն»[2]։

1803 թ. ռուս հյուպատոսը Պելոպոնեսից գրել է, որ այնտեղի կառավարիչները գիշատիչ դայլեր են և նշանակվում են մեկ տարով, որպեսզի կողոպտեն խեղճ ռայային և բոլոր նրանց ովքեր չեն կարող դիմադրել[3]։

Օսմանյան պետության բարբարոսական բաղաքականության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդել XIX դարի սկզբին Հունաստան, Եգիպտոս և Պաղեստին այցելած ֆրանսիացի հայտնի դրող և քաղաքական գործիչ Շատոբրիանը, որի ճանապարհորդական նոթերը հատվածաբար հրապարակվեցին իր ժամանակ ինչպես ֆրանսիական մամուլում, այնպես էլ «Вестник Европы» նշանավոր ռուսական պարբերականում։ Ահա մի քանի քաղվածքներ այդ հանդեսից։ Խոսելով Հունաստանի մասին հուշագիրը ընդգծում է.

---

* *Սկիզբը տես. «Պատմա-բանասիրական հանդես», 1997, № 1։*

1 Մ. Վարանդյան. *Հայկական շարժման նախապատմություն. հ. Ա, 1912, էջ 115։*

2 Г. Арш. Этнистское движение в России. Освободительная борьба греческого народа в начале XIX в. и русско-греческие связи. М., 1970, с. 49.

3 *Նույն տեղում, էջ 48։*

«Ամենուրեք հրով ու սրով ավերված գյուղեր, քաղաքների ամայացած թաղամասեր։ Տասնհինգ մղոն տարածության վրա մենք չտեսանք ոչ մի բնակավայր։ Թալանը, այլեայլ բռնությունները ոչնչացրել են հողագործությունը։ Ամենավերջին գյուղական աղան շատ հեշտությամբ կարող է գուրս քշել հույն բնակչին իր սեփական խրճիթից, խլել նրա կնոջը, երեխային, սպանել նրան... Անբախտ հույնը, կորցրելով համբերությունը, ստիպված թողնում է իր հայրենիքը և փորձում հանգստություն գտնել հարևան երկրներում։ Բայց իզուր։ Ամենուր նա հանդիպում է փաշաների և կադիների, ամենուրեք՝ և՛ Հորդանանի ավազուտներում, և՛ Պալմիրի անապատներում»[4]։

Եգիպտոսում տիրում է ահավոր չքավորություն։ Զինված ավազակային հրոսակախմբերը թալանում և ավերում են։ «Այստեղ մենք տեսանք, թե ինչպես են ալբանացիները որսում [գերեվարում] երեխաներին։ Նեղոսի ստորին հոսանքում՝ Ռոզետայից մինչև Կահիրե ընկած շրջանի 150 գյուղեր ամբողջովին ավերված են։ Զգալի տարածք գետաբերանում մնացել է անմշակ։ Ֆելլահների (գյուղացիների) մեծ մասը գատապարտվել է մահվան»[5]։

Շատոբրիանը մռայլ գույներով է նկարագրում նաև Երուսաղեմի վիճակը։ Թուրքական իշխանությունները վարում են սոցիալական կեղեքման և ազգային ճնշման դաժան քաղաքականություն։ Երուսաղեմ քաղաքի տները, գրում է նա, այնքան խղճուկ և ողորմելի են, որ ակամայից հարց ես տալիս քեզ, թե «արդյո՞ք դրանք գերեզմաններ չեն անապատներում։ Քաղաքում լռություն է տիրում, ոչինչ չի լսվում, «только иногда отдается топот дикой кобылицы. Это яничар ведет голову бедуина или скачет грабить феллаха»[6].

Մորեայի (Հունաստան) մի շարք բերդերում տեղավորված թուրքական կայազորներն զինվորները, զեկուցում էր տեղի ռուսական հյուպատոսը 1815 թ., «թալանում ու սպանում են և ամեն ինչ մնում է անպատիժ։ Այստեղ գոյություն չունի ո՛չ իշխանություն, ո՛չ օրենք»[7]։

XIX դարի առաջին երկու տասնամյակներում ահավոր բարբարոսություններ կատարվեցին Սերբիայում, Մոլդավիայում ու Վալախիայում։ Ազատագրական շարժումը արմատախիլ անելու նպատակով թուրքական սուլթանները թալանեցին ու ավերեցին հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, սրի քաշեցին կամ գերեվարեցին տասնյակ հազարավոր մարդկանց[8]։ Հանրահայտ է, թե ինչպիսի վայրագություններ տեղի ունեցան Հունաստանում, երբ հույն ժողովուրդը հերոսական ազատագրական պայքար էր մղում օսմանյան տիրապետության դեմ։

Ֆրանսիարի ճանապարհորդ Շառլ Դեվալը, որ 1825—1826 թթ. եղել է Կ. Պոլսում և Հունաստանում, ընդհանրացնելով իր տպավորությունները գրել է, որ թուրքական պետությունը «իր բարեկեցությունը և հզորությունը հիմնում է տգիտության և բարբարոսության վրա, մարդկանց դարձնում է անասուններ, որպեսզի ունենա ստրուկներ»։ Թուրքիան, շարունակում էր նա, մի երկիր է, ուր «դեսպոտիզմը և գաղանությունը վաղուց արդեն պտյքտրում են անկախության և լուսավորության դեմ»։ «Երկու տարի Թուրքիայում» վերնագիրը կրող իր հուշերում նա բերում է բազմաթիվ փաստեր այն մասին, թե ինչպիսի բարբարոսությամբ թուրք սուլթանները ավերում են հունական քաղաքները, գյուղերը և կոտորում բնակչությանը[9]։

---

4 «Вестник Европы», 1801, сентябрь, № 18, с. 82.

5 Նույն տեղում, էջ 85։

6 Նույն տեղում, էջ 87։

7 Г. Арш. Этеристское движение в России..., с. 44.

8 Ю. А. Петросян. Османская империя. Могущество и гибель. М., 1990, с. 178—179.

9 Два года в Константинополе и Морее (1825—1826)..., соч. Ш. Д.., пер с франц., СПб, 1828.

Գերմանացի զինվորական, հետագայում նշանավոր զորավար Մոլտկեն, որը 1835—1839 թթ. գտնվում էր Թուրքիայում, իր „Briefe aus der Turkei" աշխատության մեջ պատկերել է երկրի քաղաքների կողոպտված ու ավերված վիճակը։ «Թուրքական քաղաքները առհասարակ ամայության կերպարանք ունեն... Ավերումներ կատարել է ոչ այնքան ժամանակը, որքան մարդկային ձեռքը»[10] (հասկանալի է, որ «մարդկային ձեռք» ասելով հեղինակը նկատի ուներ թուրքական իշխանություններին։ Ավելացնենք, որ նույն վիճակում էին գտնվում նաև գյուղերը)։

Դարաշրջանի Արևմտյան Հայաստան այցելած ֆրանսիացի դիվանագետ Ա. Ժորերը գրել է. «Այս երկրում հողագործը իզուր է սերմեր ցանում։ Հունձը խլում են դեռ չհասունացած։ Ավազակների կատաղությունից և նահանգում իշխող փաշաների հարստահարությունից ազատվելու համար գյուղացին ստիպված է լքել դաշտերը, փախչել ընտանիքով և իր հոտերով։ Այս դժբախտ երկրում գոյություն չունի ո՛չ հայրենիք, ո՛չ ապահովություն, ո՛չ հանգիստ»[11]։

Ռուս-թուրքական 1853—1856 թթ. պատերազմի մասնակից ռուս գեներալ Լիխուտինը պատմում է. «Ես տեսա մի քանի հայեր կտրված ականջներով ու քթերով, մի բան, որ արված էր ոչ թե դատարանով, այլ կամայականորեն և բռնությամբ այս կամ այն ազդեցիկ ու հարուստ գյուղապետի կամ տեղական դատարանի անդամի կողմից։ Նրանք [հայերը] մշտապես գտնվում էին տագնապի մեջ, ունեին ահաբեկվածի տեսք»[12]։

Մշո գավառում տիրող իրադրությունը հայ նշանավոր ազգագրագետ Գ. Սրվանձտյանը 1864 թ. պատկերել է հետևյալ բառերով. «Արյան հոսում, ընչից ավար, ընտանյաց բռնաբարություն, եկեղեցոց կողոպտում, օրինաց նզծում, կենաց գրավում»[13]։ Քղի գավառի հայ բնակչության դրության մասին 1869 թ. գրված մի փաստաթղթում ասված է. «Ահ ժողովուրդը բարոյապես ու ֆիզիկապես կորսվելու վրա է, իրենց կյանքն ալ, ստացվածքն ալ վտանգի մեջ է ամեն օր. կը սպանվին, կը վիրավորվին, կը կողոպտվին, կը հարստահարվին»[14]։

Արևմտահայության կրած ճնշումների ու հալածանքների մասին կարևոր տեղեկություն է հայտնում ֆրանսիացի զինվորական Ֆրիդրիխ Միլինգենը, որը 1853—1864 թթ. ծառայել է թուրքական բանակում որպես գումարտակի հրամանատար, կրելով Օսման Սեյֆի բեյ անունը։ Նա մասնավորապես հետաքրքիր վկայություններ է բերում այն մասին, թե ինչպիսի կամայականությունների են ենթարկվել հայերը Բ. Դուռն Մեծ վեզիր Ֆուադ փաշայի կողմից[15]։

Ավելի ուշ՝ 1876 թ., էջմիածնի կաթողիկոս Գևորգ Չորրորդը ստացավ մի խնդրագիր, որը ստորագրված էր 4000 արևմտահայերի կողմից։ Այնտեղ իմիջիայլոց ասված էր. «Ջոր ու զիշեր տագնապի մեջ ենք. դառնորեն տառապում ենք գավառական պաշտոնյաների, հարկահանների, կառավարիչների և այլ բռնակալների ձեռքին, ընդհուպ մինչև այն, որ նրանք անպատվում են մեր եկեղեցական հովվին, մեր կանանց համեստությունը, մեր աղջիկների

---

10 Քաղվածքն ըստ Մ. Վարդանյանի «Հայկական շարժման նախապատմությունը» գրքի (հ. Ա, էջ 115)։

11 Հովհ. Հակոբյան. Ուղեկցություններ. հ. Զ. Երևան, 1934, էջ 150։

12 М. Лихутин. Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах. СПб., 1863. с. 168.

13 «Արծվիկ Տարոնոյ», 1864, № 1։

14 Դիվան հայոց պատմության. գիրք ԺԳ, էջ 174։

15 La Turquie sous le regne d'Abdul Aziz (1862—1867), par Frederick Millingen (Osman Seifi bej). Paris, 1868, p. 173—174. Տե՛ս նաև՝ Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ. 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 124։

պատիվը, հնդում են մեր երիտասարդների ու ծերերի արյունը, անարդում են սեր տաճարի ու օջախների սրբությունը»[16]:

Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Երրորդին ուղղված իրենց դիմումում Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկը), Խորեն Հովհաննիսյանը և Հայրապետ Խանջյանը 1882 թ. փետրվարի 10-ին գրում էին. «Հայաստանի Կանի վիլայեթի տայ քրիստոնյա բնակչության անունից, ի լրացուն մեր խոնարհ դիմումը, որ տղված էր Ձերդ Մեծությանը 1880 թ. մարտի 16-ին մեր ժողովրդի աղետալի վիճակի վերաբերյալ, նորից կրկնում ենք մեր խնդրանքը։ Ենք համարձակվեցինք վերստին դիմել Ձեզ այն պատճառով, որ ներկայումս հայ ժողովուրդը գտնվում է կործանման եզրին, քանզի վիճակը անտանելի է և հուսահատական։ Փոխանակ այն բանի, որ Բեռլինի դաշնագրի Հայոց հարցին նվիրված 61-րդ հոդվածը վերջ դներ անտանելի հալածանքներին, նոր ճնշումները հաստատում են, որ եթե այսպես շարունակվի, ապա այդ հոդվածը կդառնա մեր կործանման պատճառը։ Բեռլինի դաշնագրի կնքումից սինչև այժմ Բարձր Դռան կողմից չի նկատվում որևէ ցանկություն Հայաստանում արգարություն ու հավասարություն հաստատելու ուղղությամբ։ Ընդհակառակը, կենտրոնական կառավարական հիմնարկներում միանգամայն անտեսվում են քրիստոնյաների շահերը, արմատավորվում են մոլեռանդություն ու ատելություն նրանց նկատմամբ, որի հետևանքով կառավարական պաշտոնյաները, ավազակախմբերը և ընդհանրապես բոլոր կեղեքիչները, էլ ավելի խրախուսված ծավալում են իրենց ոճրագործությունները»[17]։

Բոլանդացի հռչակավոր արևելագետ Էմիլ Դիլլոնը, խոսելով արևմտահայերի ծանր վիճակի մասին, նշել է, որ Արևմտյան Հայաստանում հաստատված է կառավարման դաշնային այնպիսի սիստեմ, որի հետ համեմատած Ամերիկայի Միացյալ Նահանգների հարավային շտատներում մի ժամանակ գոյություն ունեցող ստրկական կարգերի «դաժանությունները միայն աննշան չարաշահություններ են»[18]։ Անվանի գիտնականը մի այլ կապակցությամբ գրել է. «Օտարերկրացի նշանավոր մի պետական գործիչ, որը սովորաբար համարվում է համոզված թուրքասեր, վերջերս ինձ հետ ունեցած մասնավոր խոսակցության ժամանակ նկատեց, որ թուրքական տիրապետությունը Հայաստանում կարելի է ճիշտ բնորոշել որպես կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն»[19]:

Թուրք-օսմանյան պետությունը իր իսկական էությունը նորից բացահայտեց այն տարիներին, երբ արյան մեջ խեղդեց բուլղար ժողովրդի ազատագրական շարժումը։ 1875 թ. օսմանյան տիրապետության դեմ ապստամբություն բարձրացրեց Բոսնիայի ու Հերցեգովինայի քրիստոնյա բնակչությունը։ Մեկ տարի հետո բռնկվեց համաժողովրդական ապստամբություն Բուլղարիայում, որը սակայն ճնշվեց ամենայն դաժանությամբ։ «Ֆիլիպոնեսի սանջակում մի քանի օրվա ընթացքում չերքեզները և բաշիբոզուկները (Թուրքիայի անկանոն հեծելազորը) սրի քաշեցին մոտ 15000 մարդ։ Կոտորածը տեղի էր ունենում ամեն տեսակի տանջանքներով և անարգանքներով»[20]։

Այս ողբերգական անցքերի մասին գոյություն ունի հարուստ գրականություն ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, բուլղարերեն և այլ

---

16 Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, փաստաթուղթ 2։

17 Архив внешней политики России (далее—АВПР). Главный архив, д. 119, л. 50.

18 E. J. Dillon The Condition of Armenia (The Contem, orary Review, N. Y.—London, August, 1895).

19 Նույն տեղում։ Տե՛ս նաև՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում։ Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Մ. Գ. Ներսիսյանի. Երևան, 1991, էջ 87։

20 История дипломатии. Т. 2, М.—Л., 1945, с. 28.

լեկուներով, ուստի հարկ չկա կանգ առնել գրանց վրա։ Սակայն ավելորդ չեմ համարում այստեղ հիշել, թե ինչ է գրել ռուս հանրահռչակ գրող Ֆ. Մ. Դոստոևսկին Բուլղարիայում կատարված բարբարոսությունների մասին։ Միայն մի քաղվածք։ «Տասնյակ, հարյուր հազարավոր քրիստոնյաներ ոչնչացվում են երկրի երեսից, ոչնչացվում են առատապես, իսպառ։ Մահացող եղբայրների աչքի առաջ անարգվում են նրանց քույրերը, մայրերի աչքի առաջ վեր են նետում նրանց մանկիկներին և որսում են հրացանների սվինների վրա։ Ավերվում են գյուղերը, եկեղեցիները, բնաջնջվում է ամեն ինչ։ Եվ դա կատարում է վայրենի հորդան՝ քաղաքակրթության ոխերիմ թշնամին։ Դու սովորական ավազակների հրոսակախումբ չէ... ո՛չ, դա սիստեմ է, դա հսկայական կայսրության դրածելակերպ է։ Ջարդարարները գործում են մինիստրների և պետության տիրակալների, հենց սուլթանի կարգադրություններով»[21]։

Դոստոևսկին զայրույթով էր խոսում նաև եվրոպական պետությունների հանցավոր անտարբերության մասին։ Եվրոպացիները, որ իրենց երկրներում վերացրին բռնատիրությունը և ազատարարեցին մարդկանց ազատությունը ու իրավունքը, այժմ «երես են դարձնում միլիոնավոր դժբախտ արարածներից»։

Գազանաբարո սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի հրամանով թուրքական իշխանությունները 1890-ական թթ. իրագործեցին նոր մասսայական կոտորածներ՝ ցեղասպանություն Արևմտյան Հայաստանում։ 1894—1896 թթ. ամենավայրագ ձևով սրի քաշվեց 300000 մարդ, կողոպտվեց ու ամայացվեց Արևմտյան Հայաստանի մեծ մասը։

Արյունարբու փադիշահի կազմած ծրագրի համաձայն թուրքական զորքերը և նրանց միացած ավազակային հրոսակախմբերը Զեքի փաշայի հրամանատարությամբ 1894 թ. արշավեցին Սասուն, որի հետևանքով սրի քաշվեց շուրջ 10000 մարդ, թալանվեցին ու ավերվեցին տասնյակ գյուղեր ու ավաններ։ Հաջորդ տարիներին՝ 1895—1896 թթ. համընդհանուր կոտորածներ տեղի ունեցան ամբողջ Արևմտյան Հայաստանում։ Սուլթան Աբդուլ Համիդը չսահմանափակվեց սովորական ջարդերով։ Նա իրագործեց իր նախօրոք մշակած ծրագիրը՝ իրականացնել արևմտահայերի ցեղասպանությունը, որպեսզի դրանով իսկ վերացնի Հայկական Հարցը։ Մի քանի վկայություններ կատարված բարբարոսությունների մասին։

Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսը Վանում Ֆիլիպ Քերին 1894 թ. նոյեմբերի 15-ին զեկուցում էր, որ թուրքական զորքերը Սասունում կատարել են սոսկալի վայրագություններ։ «Գելիեգուզանում շատ երիտասարդների ձեռն ու ոտքը կապել են, շարել կողք կողքի, վրաները ցախ թափել ու ողջ-ողջ այրել»։ Մի այլ գյուղում «մոտ վաթսուն երիտասարդ կանանց ու աղջիկների մտցրել են եկեղեցու մեջ։ Զինվորներին թույլ են տվել նրանց հետ վարվել ինչպես կամենան, իսկ դրանից հետո սպանել են բոլորին... Նավթը օգտագործել են տներն իրենց բնակիչներով վառելու համար։ Բիթլիսում մի զինվոր պատմել է, որ ինքը տեսել է, թե ինչպես բոցերի միջից փախչող մի փոքր աղա զինվորի սվինով հետ է նետվել կրակի մեջ»[22]։ Նույն թվականի նոյեմբերի 26-ին Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը Էրզրումում՝ Վ. Մաքսիմովը գրել է, որ սուլթանի զինվորները սպանել են անգամ մանուկներին և «իրենց անասնական հակումները բավարարելով անգթորեն ոչնչացրել կանանց ու աղջիկներին»[23]։

---

21 Ф. М. Достоевский. Полн. собр. соч. в 30-ти томах. Т. 23, Л., 1981, с. 61—62.

22 АВПР. Посольство в Константинополе, д. 3135.

23 Նույն տեղում, գ. 3176, թ. 45։

Կոտորածները դարձան համատարած 1895—1896 թթ.։ Մարզվանի հայերը Ռուսաստանի հյուպատոս Նալյոտովին ուղղված դիմում-նամակում 1895 թ. նոյեմբերի 9-ին գրել են. «Սոյեմբերի 3-ը, ուրբաթ օրը, մեր քաղաքի համար սև օր դարձավ, վշտալի ու սարսափելի օր։ Այդ օրը Թուրքիան իր արյունոտ պատմությունը հարստացրեց ևս մի «փառավոր» էջով, զբաղված սև տառերով ի սոսկումն և ի վրդովմունք համայն քաղաքակիրթ աշխարհի... Թուրքիան մի անդամ ևս իր արյունոտ դահն օծեց բազմաթիվ անսեղ քրիստոնյաների արյամբ»։ Հետաքրքիր է, որ նամակում նախազգուշացվում էր. «Բացառված չէ, որ թուրքական կառավարությունը իրեն հատուկ անամոթությամբ փորձի ժխտել իր մեղքը և այդ ծանր իրադարձությունների ողջ պատասխանատվությունը բարդի հայերի վրա։ Բայց ամեն դեպքում մենք պատրաստ ենք ապացուցելու, որ կոտորածի կազմակերպիչը կառավարությունն է։ Մենք ունենք բազմաթիվ հավաստի փաստեր և անհերքելի ապացույցներ, որոնք օրվա լույսի պես պարզ են և կարող են հաստատել, որ կոտորածը կանխամտածված գործողությունների հետևանք է... Ողորմած Տեր. մենք ներկայումս բոլորովին գլուխներս կորցրել ենք, չգիտենք ինչ անենք։ Մեր հույսը միայն դուք եք»[24]։

Ֆրանսիական «Դեղին դիրք» փաստաթղթերի հայտնի ժողովածուում կարդում ենք. «1895 թ. վերջին 1896 թ. սկզբին, կես տարվա ընթացքում, Փոքր Ասիայում, հայաբնակ բոլոր քաղաքներում ու գյուղերում տեղի ունեցան կազմակերպված զարհուրելի զանգվածային կոտորածներ, որոնց հանդեպ խամրեցին նույնիսկ Սասունի գազանությունները»[25]։

Բեյրութի ռուսական գլխավոր հյուպատոսի 1898 թ. հուլիսի 23 թվակիր զեկուցագրում ասված էր. «Չնայած թուրքերի բազմիցս տված խոստումներին՝ չհալածել հայերին սոսկ նրա համար, որ նրանք հայ են, ճնշումները և հալածանքները շարունակվում են Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում» և Բ. Դուրը, խրախուսելով տեղական իշխանությունների ջարդարարական գործունեությունը, ձգտում է ստիպել հայերին դիմել գաղթի[26], խոսելով 1896 թ. Ստամբուլում տեղի ունեցած հայերի ջարդի մասին թուրք լիբերալ-պատմաբան Օսման Նուրին գրել է. Այդ ջարդը «մի ահարկու եղեռն էր մարդկության դեմ։ Եղեռնի կազմակերպիչն անկասկած նույն սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդն էր»[27]։

Սուլթան Աբդուլ Համիդի մասին Անատոլ Ֆրանսը արտահայտվել է այսպես. «Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը մի հրեշ է, որը մշտապես դողում է իր խղճուկ ամենազորության մեջ և, սարսափելով իր իսկ ոճրագործություններից, իրեն հանգստացնում է նրանով, որ նոր ոճիրներ է գործում. 1893-ից մինչև 1896 թ. նա կախել ու ողջակիզել է 300 հազար հայերի և այդ ժամանակից սկսած նողկալի զգուշավորությամբ զբաղվում է որբացած ժողովրդի հետևողական բնաջնջմամբ...»[28]։

1894—96 թթ. ցեղասպանությունը առաջ բերեց բողոքի մեծ ալիք շատ երկրներում։ Օսմանյան պետության դեմ իրենց զայրույթն արտահայտեցին հատկապես գիտության ու մշակույթի շատ ներկայացուցիչներ։ Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում հրապարակվեցին բազմաթիվ աշխատություններ, որոնցում բացահայտվում էին թուրքական իշխանությունների բարբարոսությունները։

Սակայն ավելի սարսափելին, որ ցնցեց ամբողջ առաջավոր մարդկությանը, տեղի ունեցավ 1915—1916 թթ., երբ օսմանյան դառամյալ պետու-

---

24 Նույն տեղում, գ. 3181, թ. 38—40։

25 Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1897, с. 101.

26 АВПР. Посольство в Константинополе, д. 3179, л. 279.

27 Թուրքական աղբյուրները..., հ. 4, Երևան, 1972, էջ 213։

28 Anatole France. Trente ans de vie sociale. I. Introduction générale, 1897—1904. Paris, 1949, p. 137—138, 143—147.

թյան գլուխ անցած իթթիհադականների (երիտթուրքերի) կուսակցությունը կազմակերպեց արևմտահայության հրեշավոր ցեղասպանություն, որի ընթացքում զոհվեց մեկ և կես միլոն մարդ։

Արևմտահայության 1915—1916 թթ. կոտորածների՝ Մեծ Եղեռնի գլխավոր կազմակերպիչներն էին օսմանյան պետության պարագլուխներ Թալեաթ բեյը, Էնվեր փաշան, Նազըմ բեյը և ուրիշներ։ Այն գաղտնի խորհրդակցությունում, ուր քննարկվում էր հայերին բնաջնջելու հարցը, դոկտոր Նազըմ բեյը ասել է. «Հայ ժողովրդին պետք է ոչնչացնել հիմնովին, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր երկրում և մոռացվի այդ անունն իսկ։ Այժմ պատերազմ է, այսպիսի հարսար իրադրություն էլ չի լինի. Մեծ պետությունների միջամտությունը և համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքներն աննկատ կմնան։ Այժմ մենք պետք է գլխովի բնաջնջենք հայերին, անհրաժեշտ է ոչնչացնել նրանց մինչև վերջին մարդը... Ես ուզում եմ, որ այս հողի վրա թուրքը և միայն թուրքը ապրի ու երկրի լիիշխան տեր լինի։ Թող չքվեն բոլոր ոչ թուրք տարրերը՝ ինչ ազգության ու կրոնի էլ պատկանելիս լինեն»[29]։

Խորհրդակցության անդամները, իհարկե, համաձայնվել են իրենց զորածակից Նազըմ բեյի հետ։ Էնդունվում է համապատասխան որոշում։ 1915 թ. մայիս ամսին արդեն թուրքական կառավարության ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը հրամաններ է տալիս տեղական իշխանություններին երկրի հայ բնակչությանը հիմնովին ոչնչացնելու մասին։ Հալեպի վալիին ուղարկված նրա հրահանգում, օրինակ, ասված էր. «Ձեզ արդեն հաղորդվել է, որ Համիդի [արիսթուրքերի ղեկավար կոմիտեի] որոշման համաձայն պետք է ամբողջովին ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին։ Նրանք, ովքեր հանդես են գալիս այդ որոշման դեմ, չեն կարող մնալ իրենց պաշտոններում։ Որքան էլ դաժան լինեն ձեռնարկված միջոցառումները, այնուամենայնիվ պետք է վերջ տալ հայերի գոյությանը։ Ուշադրություն մի դարձրեք ո՛չ տարիքին, ո՛չ սեռին, ո՛չ խղճի խայթին»[30]։

Եվ հրամանը կատարվեց ամենայն բարբարոսությամբ։ Տեղի ունեցավ XX դարի առաջին ցեղասպանությունը իր անօրինակ վայրագություններով։ Բերենք անհերքելի ու կասկած չհարուցող մի շարք վկայություններ։

Թուրքական հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ փաշան 1926 թ. հունիսին շվեյցարացի լրագրող Էմիլ Հիլդեբրանդի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ խոսելով երիտթուրքերի ոճրագործությունների մասին ասել է. «Երիտթուրքերը պետք է պատասխան տան մեր հպատակ մի քանի միլիոն քրիստոնյաների համար, որոնք դաժանորեն արտաքսվեցին իրենց հայրենի օջախներից և ոչնչացվեցին»[31]։

Երիտթուրքերի տիրապետության ժամանակ պատասխանատու պաշտոն վարող Նայիմ բեյը, որը ի պաշտոնե անձամբ զբաղվել է հայերի դեպորտացիայի հարցերով, գրել է. «Հայերի աքսորն ու կոտորածը իրենց հավասարը չունեն անմարդկային արարքների մասին մինչև այժմ գրված պատմությունների մեջ։ Թուրքիայի ընդարձակ տարածքի որ անկյունն էլ որ հայացք նետես, որ խոր կիրճն էլ որ նայես՝ ամենուրեք կարելի է գտնել ամենադաժան կերպով խողխողված ու այլանդակված հազարավոր հայերի դիակներ ու կմախքներ»[32]։

---

[29] Mevlan Zade Rifat. Türkiye inkilabinin ic yuzu. Halep, 1929, s. 89—93.

[30] The Memoirs of Naim Bey. Turkish Documents Relating to the Deportations and Massacres of Armenians. Compiled by Aram Andonian. London. 1920, p. 64.

[31] Տե՛ս „Los Angeles Examiner" թերթի 1926 թ. օգոստոսի 1-ի համարը։

[32] The Memoirs of Naim Bey. Turkish Official Documents Relating to the Deportations and Massacres of Armenians..., p. 1—47.

Կատարված ոճրագործությունների մասին գրել է նաև քաղաքական գործիչ, Երիտթուրքերի գաղտնի խորհրդակցությունների մասնակից Մևվլան Զադե Ռիֆաթը[33]։

Կարևոր են նաև գերմանական աղբյուրների վկայությունները։ 1912—1915 թթ. Թուրքիայի դաշնակից Գերմանիայի դեսպանը Կ. Պոլսում՝ բարոն ֆոն Վանգենհայմը, որ մեծ ազդեցություն ուներ Երիտթուրքերի ղեկավարների վրա, լավատեղյակ էր Օսմանյան կայսրության մեջ կատարվող անցքերին, կանցլեր Բեման Հոլվեգին ուղղված 1915 թ. հունիսի 17 թվակիր գաղտնի զեկուցագրում հաղորդել է. «Վերջերս ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան բացահայտորեն հայտարարել է կայզերական դեսպանության աշխատակից, դոկտոր Մորդմանին, որ Բ. Դուռը ցանկանում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թշնամիների (քրիստոնյաների) հետ»[34]։

Նույն դեսպանը մոտ մեկ ամիս հետո խոսելով թուրքական իշխանությունների կողմից կատարվող հայերի բռնի գաղթեցումների մասին գրել է, որ օսմանյան կառավարությունը «իրոք նպատակ ունի ոչնչացնել հայ ցեղը թուրքական պետության մեջ»[35]։

Գերմանիայի նոր դեսպան Վոլֆ Մետերնիխը 1916 թ. հունիսի 30-ի իր գաղտնի տեղեկագրում հաղորդել է, որ Երիթթուրքերի «կենտրոնական կոմիտեն պահանջում է բնաջինջ անել հայերի վերջին մնացորդները» (Das Komitee verlangt die Vertilgung der letzten Reste der Armenier)[36]։ Դեսպանը երիտթուրքերին համարում էր մոլի ֆանատիկոսներ ու «սոված գայլեր»։

Մեծ Եղեռնի մասին կարևոր փաստաթղթեր կան նաև Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայի դաշնակից Բուլղարիայի պետական արխիվներում։ Այսպես. Բուլղարիայի Կ. Պոլսի դեսպան Ն. Կոլոշևը 1915 թ. հուլիսի 15-ին իր երկրի մինիստրների խորհրդի նախագահ դոկտոր Վ. Ռադոսլավին զեկուցել է. «Շարունակվում են հայերի ջարդերն ու հալածանքները, որոնք ստանում են այս ժողովրդին վերջնականապես բնաջնջելու ահավոր կերպարանք։ Ամենուրեք հայկական բնակավայրերը բոլորովին ամայանում են։ Կանայք ուղարկվում են թուրքական կենտրոններ և հանձնվում հարեմներին, երեխաները բաժանվում են թուրք ընտանիքների միջև՝ թուրքացնելու համար, տղամարդիկ աքսորվում են Միջագետք, Արաբիա և այլ հեռավոր ծայրամասեր»[37]։ Այդ նույն ամսին Զմյուռնիայի դեսպան Իվան Համամջիևը զեկուցել է. Անատոլիայի հայ բնակչությունը «ենթարկվել է ոչ միայն սիստեմատիկ հալածանքների, այլև զանգվածային կոտորածների։ Բիթլիսում և Էրզրումում ոչ մի հայ չի մնացել։ Այնտեղի հայերի մի մասը փախել է Ռուսաստան, իսկ ուրիշները կոտորվել են։ Անկարայից վտարված 750 հայ ընտանիքներ ճանապարհին սպանվել են բաշիբոզուկ չեթեների կողմից։ Իզմիթի, Բուրսայի, Էրզրումի և Բիթլիսի հայ հոգևոր առաջնորդները շղթայակապ տարվել են և աքսորվել հայտնի չէ, թե ուր»[38]։

Գրեթե նույն տեսակետներն են արտահայտել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի դաշնակից Ավստրիայի պետական ու գի-

---

33 Տե՛ս Геноцид армян в Османской империи. Документы и материалы, под редакцией проф. М. Г. Нерсесяна. Ереван, 1966, с. 362—366.

34 Deutschland und Armenien. 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 84.

35 Նույն տեղում, էջ 94։

36 Նույն տեղում, էջ 277։

37 Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի տակ, բուլղարերենից թարգմանեցին Զ. Ղասաբյան, Կ. Ճինգոզյան. Երևան, 1996, էջ 19—20։

38 Նույն տեղում, էջ 23։

վանադիտական գործիքները։ Այսպես. Ավստրիայի վիցե-մարշալ Պոմիանկովսկին, որ իր պետության լիազոր ներկայացուցիչն էր Թուրքիայում և սերտ կապեր ուներ երիտթուրքերի պարագլուխների հետ, նույնպես զայրույթ է արտահայտել թուրքական կառավարության կողմից հայերի նկատմամբ իրագործվող անօրինակ դաժանությունների ու բարբարոսությունների դեմ[39]։

Հայտնի է, որ վենետիկցի սպա Ռաֆայել Նոգալիսը, որպես կամավոր թուրքական բանակում կռվում էր ինքնապաշտպանության ելած հայերի դեմ։ Բայց չնայած դրան նա ևս ընդունում է, որ երիտթուրքերի կառավարությունը վարում է ջարդարարական քաղաքականություն[40]։

Հենրի Մորգենթաուն, որ 1913—1916 թթ. զբաղեցնում էր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանի պաշտոնը Կ. Պոլսում և հաճախակի հանդիպումներ էր ունենում օսմանյան պետության ղեկավար գործիչների հետ, գրել է. «Ես վստահ եմ, որ մարդկության ամբողջ պատմության մեջ չկան այնպիսի զարհուրելի վիճակներ, ինչպիսին այս վերջերս էր։ Այն, մեծ գրողները ու հալածանքները, որոնք տեղի ունեցել անցյալում, համարյա աննշան բան են թվում հայ ազգի 1915 թ. կրած տառապանքների համեմատությամբ»[41]։ Դեսպանի արձանագրած հուշերում կան նաև այսպիսի տողեր. «Մի անգամ ես զրույց ունեցա թուրք պատասխանատու և բարձրաստիճան պաշտոնյայի հետ, որն ինձ պատմեց, թե ինչ խոշտանգումներ են կիրառվում հայերի նկատմամբ։ Նա չթաքցրեց, որ կառավարությունը հավանություն է տալիս կիրառվող խոշտանգումներին... Այդ աստիճանավորն ասաց, որ խոշտանգումների այդ բոլոր մանրամասնությունները քննարկվել են «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի շտաբ-կայանի գիշերային նիստում։ Ծավ պատճառող յուրաքանչյուր նոր միջոց գնահատվում էր որպես հիանալի հայտնագործություն, և աստիճանավորները շարունակ գլուխ են կոտրում մի նոր տանջանք հնարելու համար։ Նա իսկ պատմեց, որ նրանք զիմել են նույնիսկ իսպանական ինկվիզիցիայի հաշվետվություններին... և ընդօրինակել այն բոլորը, ինչ որ գտել են այնտեղ»[42]։

Սեծ Սղոսի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև պարսիկ ու արաբ ականատեսները։ Այսպես օրինակ. պարսիկ Քևրսլելա Ալի Մեհմեդը պատմել է. «Ես ռազմամթերք կը փոխադրեի Սրընկայեն Կարին։ Մի անգամ 1915 հունիսի մեջ, երբ եկա Խոխուրի կամուրջին մոտ, մի ահռելի տեսարան ներկայացավ իմ աչքերում։ Անթիվ-անհամար մարդկանց դիակներ մեծ կամուրջին 12 կամարները լեցուցած էին, դեմ էին առած, և ջուրը իր ընթացքը փոխած կամուրջն անդին կը վազեր։ Սոսկալի էր տեսնիլը, երկար սպասնցի քարավանովս, մինչև որ այդ դիակները քշվեցան և կարողացա կամուրջն անցնիլ։ Սակայն կամուրջն մինչև Ճինիս ամբողջ ճանապարհը լեցուն էր դիակներով. ծերեր, կիներ, երեխաներ արդեն հոտած, նեխված և ուռած։ Այնպիսի մեծ գարշահոտություն կար, որ անցնիլ այդ ճանապարհով անհնար էր։ Իմ երկու ուղտապաններս արդեն հոտեն հիվանդանալով՝ մեռան, և ես ստիպվեցա ճանապարհս փոխել։ Անլուր և զարհուրելի ոճրագործության զոհեր և հետքեր էին ասոնք։ Բոլոր դիակները հայեր, թշվառ հայեր էին»[43]։

---

[39] J. Pomiankowski. Ler Zusammenbruch des Ottomanischen Reiches. Grar, 1969, S. 165.

[40] Տե՛ս Vahakn N. Dadrian. German Responsibility in the Armenian Genocide..., p, 32—33.

[41] Henry Morgenthau. Ambassador Morgenthau's Story. New York. 1918, p. 324.

[42] Նույն տեղում, էջ 315։

[43] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում..., էջ 376։ Մի այլ պարսիկ հեղինակ՝ Սեյյիդ Մոհամմադ-Ալի Ջամալ-Զադեն, իր հուշերում գրել է. «Ես ականատես եղա այն անտանելի դաժանության ու խոշտանգումներին, որոնք թուրքերը կիրառում էին հա-

Արևմտահայերի 1915 թ. կոտորածների ականատես, արար մտավորական Ֆաեզ էլ Հուսեյինը գրել է. «Հայերին մահվան մատնելը վրդովեցուցիչ, ահավոր դաժանություն էր... Նրանց բնաջնջելու եղանակները տարբեր էին. Բիթլիսում իշխանությունները հայերին լցնում էին մեծ, հարդով լի մարագները, դռները փակում ծղոտով և հրդեհում... Մուշում սպանում էին գնդակներով, դանակներով ու դաշույններով։ Իշխանությունները վարձում էին մսագործների, որոնք մարդասպանի արհեստի համար օրական ստանում էին մեկ ոսկի... Դիարբեքիրում իշխանությունները հայերին բնաջնջում էին մերթ հրով, մերթ սրով։ Հաճախ նրանց խումբ-խումբ նետում էին ջրհորները, կամ փոսերի մեջ ու ողջ-ողջ թաղում։ Շատ հայեր էլ ջրահեղձ են արվել Տիգրիսում և Եփրատում... ժանդարմները ուրիշ եղանակ էլ էին կիրառում։ Նրանք կանանց ու երեխաներին կապում էին իրար ու մեծ բարձրությունից ցած նետում... Հայերի դեմ գործադրած դաժանությունների պատասխանատվությունը ընկնում է «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի անդամների վրա, որոնք իրենց ձեռքին էին պահում իշխանությունը։ Նրանք մոլեռանդ ցեղապաշտներ էին»[44]։

Ֆրանսիացի ականավոր հրապարակախոս Հանրի Բարբին 1916 թ. այցելելով Արևմտյան Հայաստան, այնտեղ կատարված գազանությունների մասին գրել է. «Չկա ոչ մի ծառ, ոչ մի ժայռ, մամուռի ոչ մի կտոր, որը վկա չլինի մարդու սպանության, որը պղծված չլինի թափված արյան հեղեղներով։ Չկա ոչ մի դետ կամ վտակ, որը դեպի հավիտենական մոռացություն տարած չլինի հարյուրավոր ու հազարավոր դիակներ։ Չկա ոչ մի անդունդ կամ կիրճ, որոնք չլինեն գերեզմաններ բաց երկնքի տակ, որոնց խորքերում չերևային կմախքների բաց կրծքավանդակները, քանի որ մարդասպանները գրեթե ոչ մի տեղ չեն վատնել ո՛չ ջանը, ո՛չ ժամանակ, որպեսզի թաղեն իրենց զոհերին։ Այո ընդարձակ մարզերը, որոնցում մի ժամանակ ծաղկել են հայկական բնակավայրերը, այսօր ամայացած ու անմարդաբնակ են»[45]։

Հայկական կոտորածներին տեղյակ և ականատես, Կ. Պոլսի հայ պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը 1915 թ. դեկտեմբերին ամերիկահայերին տեղեկացնում էր. «Պատմությունը չեմ կարծեր, թե առանցագրած բլլա այսպիսի կոտորած մը... Չեմ կարծեր, թե որևէ գրիչ կամ բերան կարենա նկարագրել այն զարհուրելի նախնիները, որոնք տեղի ունեցան վերջին 8—9 ամիսներուն մեջ Թուրքիոյ մեկ ծայրեն մինչև մյուս ծայրը... Համիդյան ռեժիմին ատեն կամ անկե առաջ տեղի ունեցած կոտորածները չնչին բան մը կն ասոր քով։ Այս անգամ գործադրվածը իսկապես բնաջնջումի ծրագիր մը էր, և այսօր որ անիկա ի գլուխ ելած է, այլևս կրնա ըսվիլ, թե հայը իր հայրենիքին մեջ պատմական դարձած է... Կուսակալներեն ոմանք պարծանոք հեռագրեցին կենտրոնական կառավարության, թե իրենց կառավարած նահանգներուն մեջ ոչ մի հայ կգտնվի այլևս։ Այս անգամ խուժանը չէր, որ հարձակվեցավ խաղաղ ժողովրդին վրա, այլ նույն ինքը կառավարությունը, որ իր ծրագիրը գործադրեց զինվորներու, ժանտարմներու, ոստիկաններու և մանավանդ հրոսակախմբերու ձեռքով։ Հրահանգը կենարոնեն արվեցավ և ամեն կողմ գործադրվեցավ անխղճորեն։ Ժողովուրդը վտարվեցավ իր հայրենի

յերի նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին. արդյունքն եղավ, ինչպես գիտենք, միլիոնավոր հայերի ջարդը» (տե՛ս «Երան-Նամեհ», 1993, № 1, էջ 13, Ս. Սաֆարյանի հաղորդումը)։

44 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում..., էջ 493։ Արևմտահայերի 1915—1916 թթ. ցեղասպանության մասին գրել են նաև բազմաթիվ արար պատմաբաններ. տե՛ս Ն. Հովհաննիսյանի՝ այս հարցին նվիրած հոդվածը, որ տպագրվել է «Новая история Армении в трудах современных зарубежных авторов» գրքում (Երևան, 1993, էջ 159—218)։

45 Анри Барбп. В стране ужаса. Перевод с французского. Тифлис, 1919. с. 40.

օջախեն, լքելով ամեն ինչ և ճամփան կոդոպտվեցավ ու կոտորվեցավ։ Սամսոնեն սկսյալ մինչև Տիգրանակերտ գրեթե հայ այր մարդ չէ ազատված։ Երիտասարդ կիներն ու աղջիկներն առևանգվեցան ու մանուկները կոտորվեցան։ Կոտորածը ահռելի եղած է Մուշ, Բազեշ, Տիգրանակերտ, Եդեսիա, Տրապիզոն, Շապին-Գարահիսար, Քղի, Բալու և Երզնկա-Քեմաղ, ուր գրեթե ոչ մեկ հայ ազատված է, մանուկներն ու ծեռերն անգամ չխնայվելով։ Հայաստանի մյուս նահանգներեն ազատվածներ կան, սակայն հազիվ 5 տոկոսի համեմատությամբ։ Շատ մը քաղաքներև և գյուղերե հազիվ մեկ-երկու կիներ կան այսօր։ Բաղեշ ու շրջականներ, ուրկե հայ մը ազատված ըլլալու լուր չուննենք տակավին։ Տիգրանակերտի նահանգը, ուր ոչ միայն հայերը, այլև ասորիներն ու քաղդեացիներն ալ կոտորված են։ Կուսակալեն տրված ջարդի հրամանը չգործադրվելուն համար երեք թուրք գայմագամներ պաշտոնանկվելով սպանված են։ Տրապիզոնի և շրջականների հայությունը գրեթե ամբողջովին կոտորված կամ ծովամույն եղած է»[46]։

Մեծ եղեռնի մասին գոյություն ունեն անհերքելի բազմաթիվ այլ վկայություններ։ Մեր ժողովրդի այդ ահավոր ողբերգության վերաբերյալ հրապարակվել են բազմաթիվ ու բազմատեսակ աշխատություններ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով[47]։

Հայերի ցեղասպանության փաստը բացահայտվեց նաև երեք դատական պրոցեսների ժամանակ։ 1919 թ. Կ. Պոլսում թուրքական նոր կառավարության կողմից ստեղծված ռազմական դատարանը, հաստատելով երիտթուրքերի հանցագործությունները, մահվան դատապարտեց մի շարք ոճրագործների, դրանց թվում և Թալեաթ, Էնվեր ու Ջեմալ փաշաներին[48] (վերջիններս դատվում էին հեռակա կարգով, քանի որ նրանք, փախչելով Թուրքիայից, ծպտված ապրում էին արտասահմանում)։ Երկրորդ դատավարությունը տեղի ունեցավ 1921 թ.՝ Բեռլինում։ Հայտնի է, որ այդ թվականի մարտի 15-ին երիտասարդ հայրենասեր, վրիժառու Սողոմոն Թեհլիրյանը սպանեց հայ ժողովրդի ոխերիմ թշնամի Մեհմեդ Թալեաթին։ Բեռլինի դատարանը, հենվելով բազմաթիվ փաստերի ու վկայությունների վրա, ապացուցված համարեց այն, որ ազդայնամոլ, ռասիստ երիտթուրքերն իրենց նվաճողական, պանթուրքիստական ծրագրերն իրականացնելու նպատակով, իսկապես կազմակերպել են հայերի 1915—1916 թթ. ցեղասպանությունը և որ կատարված ոճրագործությունների գլխավոր հեղինակը եղել է հենց ինքը՝ մեծ դահիճ Թալեաթը։ Ելնելով դրանից, դատարանը արդարացրեց Թեհլիրյանին։ Դատավճիռը ջերմ արձագանք գտավ շատ երկրների առաջավոր հասարակայնության մեջ[49]։

Հայերի ցեղասպանության հարցը նորից քննարկվեց 1984 թ. ապրիլի 13—16-ին Փարիզում (Սորբոնի համալսարանում)։ Ժողովուրդների Մնայուն Ատյան կոչվող դատարանը, որի կազմում ընդգրկված էին միջազգային համբավ ունեցող գիտնականներ, հասարակական ու քաղաքական գործիչներ, մի

---

46 Հայաստանի պետ. կենտ. պատմ. արխիվ. ֆոնդ 57, ց. 2, գ. 672, թ. 72—73։

47 Մեծ եղեռնի մասին վերջին երկու տասնամյակում հայ պատմաբաններ Ռ. Ադալյանի, Ա. Բելլերյանի, Վ. Դադրյանի, Ռ. Հովհաննիսյանի, Վ. Միքայելյանի, Մ. Ներսիսյանի, Ա. Օհանջանյանի, Ս. Ստեփանյանի և ուրիշների ջանքերով հրատարակվեցին ու վերահրատարակվեցին արխիվային փաստաթղթերի նոր, արժեքավոր ժողովածուներ, որոնցից մի մասը՝ հայերեն, ռուսերեն, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն։ Հայոց ցեղասպանության պատմությունը հանգամանորեն լուսաբանված է մասնավորապես Վ. Դադրյանի 1995 թ. լույս տեսած „The History of the Armenian Genocide" ծավալուն աշխատության մեջ։

48 Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի. Երևան, 1988։

49 Մ. Ներսիսյան (Ա. Ա.). Ինչու արդարացվեց ամբաստանյալը. տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1996, № 1—2։

անգամ ևս անվերապահորեն ընդունեց հայերի ցեղասպանության փաստը և պահանջեց, որ այն ճանաչվի բոլոր պետությունների կողմից[50]։

Հարկ է նկատել, որ օսմանյան պետությունը ինչպես նախորդ դարերում, այնպես էլ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին դաժան քաղաքականություն էր վարում նաև արաբ ժողովրդի նկատմամբ։ Հավատարիմ իրենց գաղափարին, թուրքական իշխանությունները դանդվածային ջարդեր կազմակերպեցին, օրինակ. Եմենում, Լիբանանում, Պաղեստինում և Սիրիայում։ Հայտնի է, որ 1915—1916 թթ. ռազմաշունչ պանթուրքիստ երիտթուրքերը խիստ հալածանքների ու կոտորածի ենթարկեցին, ի թիվս մյուս ժողովուրդների, նաև հույներին։

Այս բոլորից հետո, կարծում եմ, տեղին է այստեղ հիշել մեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որը հակառակ օսմանյան պետության «քաղաքակրթական միսայի» մասին բարբաջող կեղծարարների, դրել է, թե սուլթանական Թուրքիան եղել է «ոչ թե պետություն, այլ սպանդանոց»[51]։

* * *

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության ամբողջ գոյության ընթացքում, հատկապես XVIII—XX դարերում, տեղի են ունեցել ազգային-ազատագրական բնույթի բազմաթիվ ապստամբություններ։ Բնականորեն հարց է ծագում՝ ի՞նչն էր դրանց պատճառը։ Պատմության կեղծարարները սովորաբար աշխատում են մոռացության տալ այդ իրողությունը, իսկ եթե այնուամենայնիվ ստիպված են պատասխանել հարցին, ապա նորից կեղծելով պատմական փաստերը փորձում են ցույց տալ, որ դրանք հրահրել և կազմակերպել են Թուրքիայի թշնամի պետությունները՝ Ռուսաստանը և երբեմն էլ Մեծ Բրիտանիան։ Նորից արտառոց ստախոսություն։ Խնդրին վերաբերող գիտական պատմագրությունը բազմիցս ապացուցել է, որ օսմանյան պետության դեմ ուղղված ազատագրական շարժումների գլխավոր պատճառը թուրքական սուլթանների կողմից նվաճված երկրներում ստեղծված բարբարոսական, անտանելի ռեժիմն էր։ Այդ է ճշմարտությունը։ Պատահական չէ, իհարկե, որ Թուրքական բռնապետության դեմ ծավալված ազատագրական այդ շարժումները զոմբոռոել ու փառաբանել են առաջադեմ և հումանիստ բազմաթիվ նշանավոր ոեմբեր։

Աշխարհահռչակ անգլիացի բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը, օրինակ, շատ ճիգեր թափեց, որպեսզի հույն և հայ ժողովուրդները ևս ազատագրվեն Թուրքական սուլթանների լծից։ Հայտնի է, որ նա, չսահմանափակվելով գաղափարական պրոպագանդայով, միացավ հույն ապստամբներին և զենքը ձեռքին պաշտպանեց ապստամբ ժողովրդին։ Մեծ բանաստեղծը նշելով այն, որ Հայաստանը դարեր շարունակ գտնվել է օտար բռնակալների և մասնավորապես Թուրք փաշաների տիրապետության տակ, ազատագրական պայքարն կոչ էր անում նաև հայերին։ Բայրոնը մտերմական կապեր հաստատեց Վենետիկի Մխիթարյանների հետ, սովորեց հայերեն, ուսումնասիրեց հայոց պատմությունը, կատարեց մի շարք թարգմանություններ հայերենից անգլե-

---

[50] A Crime of Silence. The Armenian Genocide. The Permanent People's Tribunal. The English text was edited by Gerard Libaridian. London, 1985. Հայոց Մեծ եղեռնի մասին նշած հարուստ դիտական դրականության առկայությանը Թուրքական իշխանություններն այսօր էլ համառորեն աշխատում են ժխտել հայերի 1915—1916 թթ. ցեղասպանությունը։ Բնորոշ է, որ նրանք մեծ գումարներ են առաջարկում ԱՄՆ-ի համալսարանների այն ամբիոններին, որոնք կհրատարակեն հայոց մեծ ողբերգության փաստը ժխտող «ուսումնասիրություններ» (տե՛ս «Республика Армения», 1998, № 7, 16).

[51] Հովհաննես Թումանյան. Երկերի ժողովածու, հատոր յոթերորդ. Երևան, 1995, էջ 194։

րեն, բարձր գնահատական տվեց հայոց լեզվին, մշակույթին և այլն։ Շատ հետաքրքիր է, որ նա խիստ դատապարտել է այն հայ հոգևորականներին, որոնք դեմ էին հայերի ազատագրական շարժմանը։ Դիմելով նրանց Բայրոնը ասել է. «Դուք վախենում եք խիստ կարծիք տալ ձեզ ճնշողների մասին։ Ստրուկներ և վախկոտներ, դուք արժանի եք բիրտ իշխանավորների։ Դուք արժանի չեք այն մեծ ազգին, որից ծագում եք»[52]։

Լինելով բոլոր բռնապետությունների թշնամի, Բայրոնը խստորեն քննադատել է նաև Մեծ Բրիտանիային, որը վճռականորեն հանդես էր գալիս ազատագրական պայքար վարող ժողովուրդների դեմ։ Նա, օրինակ, համարձակորեն նշում էր այն իրողությունը, որ Մերձավոր Արևելքում Անգլիայի հետապնդած դլխավոր նպատակն է դահիճանել սուլթանական Թուրքիայի ամբողջականությունը, այլ կերպ ասած՝ ապահովել օսմանյան բռնապետության տիրապետությունը դենքի ուժով նվաճված ժողովուրդների վրա։ Այդ էր պատճառը, որ ազատասեր բանաստեղծը իր «Չայլդ Հարոլդ»-ում ընդվզել է.

«И мне гласить на языке британца,
Что он Афин слезами упоен?
Покрыть Европу краскою румянца,
Сказать, что беззащитных давит он?

. . . . . .

Сам взялся за грабёж такого рода,
Которым брезгали и деспоты и годы!»[53].

Սուլթանական Թուրքիայի դեմ ուղղված ազատագրական շարժումները ողջունել է նաև ռուս հանճարեղ գրող Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինը։ Այսպես. 1829 թ. գրած նրա մի բանաստեղծության մեջ, որն ունի «Восстань, о Греция, восстань» խորագիրը, կան այսպիսի տողեր.

Восстань, о Греция, восстань,
Недаром напрягала силы,
Недаром потрясала брань
Олимп и Пинд и Фермопилы.

. . . . . .

Страна героев и богов
Расторгла рабские вериги
При пеньи пламенных стихов
Тиртея, Байрона и Риги»[54].

Նկատենք, որ հույների նկատմամբ ջերմ վերաբերմունք ունեին իր ժամանակի առաջավոր ռուս մտավորականները և առաջին հերթին դեկաբրիստները, որոնցից շատերը ցանկություն հայտնեցին մասնակցելու Հունաստանում ծավալված ապստամբական շարժմանը։

Հայտնի դեկաբրիստ, բանաստեղծ Վ. Կյուխելբեկերը ջերմորեն ողջունելով հույների ապստամբությունը, կոչ է արել.

---

52 Ս. Դաշտենց. Բայրոնը և հայերը. Երևան, 1959, էջ 95։ Տե՛ս նաև Thomas Moore. The Life and Journals of Lord Byron. London, 1866.

53 Байрон. Избранные произведения в одном томе. М., 1935, с. 41.

54 А. С. Пушкин. Собр. соч. в шести томах. Т. 1, М.—Л., 1936, с. 593. Պուշկինի այս բանաստեղծությունը առաջին անգամ լույս տեսավ 1903 թ.։

Друзья! Нас ждут сыны Эллады!
Кто даст нам крылья? Полетим!
Сокройтесь горы, реки, грады—
Они нас ждут—скорее к ним![55]

Երիտասարդ Վիկտոր Հյուգոն 1827 թ. գրել է.

Скорее в Грецию! Пора! Ей вся любовь!
Пусть мученик-народ отмстит врагам за кровь,
Которую там проливают.
Скорее в Грецию, друзья! Свобода! Месть!
Тюрбан на голове, кривая сабля есть...
Скорей! Пусть мне коня седлают!...[56]

Ավելի ուշ, 1866 թ. Կրետե կղզում օսմանյան պետության դեմ ծագած ապստամբության կապակցությամբ Հյուգոն «Orient» պարբերականի գլխավոր խմբագրին հայտնել է, որ ինքը պատրաստ է Բայրոնի օրինակով կռվել ապստամբների հաղթանակի համար[57]։

* * *

Կանգ առնենք մի հարցի վրա ևս։ Պատմության կեղծարարները, ինչպես հայտնի է, պնդում են, որ հայոց Մեծ Եղեռնի հիմնական պատճառը իբր եղել է 1914 թ. կազմակերպված հայկական կամավորական ջոկատների հակաօսմանյան գործունեությունը և Վանի հայության 1915 թ. ապստամբությունն ուղղված տիրող կարգերի դեմ։ Միանգամայն անհիմն ու շինծու պատճառաբանություններ։ Նախ նեատենք, որ Վանի հայերը ոչ թե ապստամբել են, այլ ստիպված են եղել դիմել ինքնապաշտպանական կռիվների։ Իրականում Մեծ ոճիրի պատճառը թուրք ագգայնամոլների պանթուրքիստական ծրագրերն էին, ծրագրեր, որոնք մշակվեցին և ընդունվեցին իթթիհադականների (երիտթուրքերի) կողմից դեռևս 1910—1911 թթ. Սալոնիկում կայացած նրանց դաղտնի ժողովներում ու համագումարում։ Այդ մասին գրել են ոչ քիչ հեղինակներ և ամենից առաջ Անգլիայի փոխհյուպատոս Արթուր Բ. Հեբնը։ 1910 թ. օոոստոսի 28-ի իր զեկուցագրում՝ ուղղված Կ. Պոլսի Անգլիայի դեսպան Լոուիթերին, նա հայտնում էր. «Ես գաղտնի աղբյուրներից ձեռք եմ բերել բովանդակությունը այն ճառի, որ վերջերս Թալեաթն արտասանել է Սալոնիկի դաղտնի խորհրդակցության ժամանակ՝ «Միություն և Առաջադիմություն» տեղական կոմիտեի անդամների առաջ»։ Թալեաթը ասել է. Սահմանադրության համաձայն պիտի հաստատվի հավասարություն մուսուլմանների և գյավուրների միջև, բայց դուք գիտեք, որ դա անիրագործելի է։ Շարիաթը, մեր ողջ անցյալ պատմությունը, հարյուր հազարավոր մուսուլմանների և նույնիսկ հենց իրենց՝ գյավուրների գգացմունքները դեմ են դրան։ «Գյավուրները համառորեն դիմադրում են օսմանիզացիային։ Ուստի չի կարող նույնիսկ խոսք լինել հավասարության մասին»[58]։ Եզրակացություն պարզ էր՝ պետք

---

[55] В. Кюхельбекер. Стихотворения. М., 1939, с. 73.

[56] Виктор Гюго. Собр. соч., в 15-ти томах. Т. 1, М., 1953, с. 376.

[57] *Նույն տեղում, էջ 590։*

[58] British Documents on the origins of the War. 1898—1914, vol. IX, London, 1933, p. 208—209.

է ոչնչացվեն բոլոր գյավուրները և առաջին հերթին հայերը և հույները, քանի որ նրանք չեն ցանկանում դառնալ օսմանցիներ։ Համապատասխան որոշումներ ընդունվեցին իթթիհադականների հաջորդ խորհրդակցություններում։

Խիստ հատկանշական է, որ արդեն 1912—1913 թթ. տեղի ունեցան հայ բնակչության ջարդեր, կոդոպուտներ և թալան ամբողջ կայսրության մեջ։ Ահա մի քանի վկայություններ։ 1912 թ. սեպտեմբերի 4-ին Կ. Պոլսո պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունին էջմիածնի կաթողիկոսին գրած իր նամակում նշում էր, որ չնայած օսմանյան սահմանադրության առկայությանը, արևմտահայերի վիճակը վատանում է։ Ամենուրեք կատարվում են նոր չարադործություններ, շարունակվում են հայերի սպանությունները, հայկական գյուղերի թալանը և ավերումը։ «Վերջերս մեզ հասած հեռագրերը դուժեցին սպանությունների, ավարառությունների, առևանգումների, բռնի իսլամացումների մասին։ Հայ ժողովրդին սպառնում է իսպառ չքանալու վտանգը, համընդհանուր կոտորածը»։ 1912 թ. սեպտեմբերի 25-ին Երևանի աղդային, բարեգործական-կրթական հաստատությունների 32 ներկայացուցիչներ Ամենայն Հայոց կաթողիկոսին գրում էին. «Վերսկսվել են մասնակի կոտորածները, տաճկահայ ժողովուրդը կրկին կանգնած է սպառնացող մեծ վտանգի առաջ։ Ստեղծվել է մի դրություն, որը կարող է առաջ բերել 1895—1896 թթ. ողբալի դեպքերը... Վանի, Բաղեշի, Մուշի, Տիգրանակերտի և Կիլիկիայի կողմերից ստացվող հուզիչ լուրերը, այստեղ՝ Ռուսաստանում ցնցել են հայ հասարակության լայն խավերը»։ Նամակի հեղինակները խնդրում էին դիմել Ռուսաստանի կայսրին, որպեսզի նա պաշտպանի արևմտահայությանը։ Կաթողիկոսը նման խնդրագրեր ստացավ նաև Թիֆլիսի, Ախալցխայի, Վանի, Բաղեշի և այլ քաղաքների հայ բնակչությունից։ 1913 թ. հուլիսին Կ. Պոլսի հայ պատրիարքը նորից հաղորդում էր էջմիածնի կաթողիկոսին, որ ըստ դավառներից ստացած հավաստի տեղեկությունների «հայ ժողովրդի վիճակը հետզհետե կը վատթարանա և հայկական ընդհանուր կոտորածի մը վերահաս վտանգին տակ կը գտնվի»[59]։

Հայ, ռուս, ինչպես և շատ երկրների մամուլը 1912—1913 թթ. գրում էր, որ թուրքական իշխանությունները ծավալում են հակահայկական պրոպագանդա, կազմակերպում են ջարդարարների, ավազակների խմբեր և նրանց միջոցով ավերում բազմաթիվ գյուղեր ու բնակավայրեր։ Որոշ թերթեր ճիշտ կռահեցին որ նախապատրաստվում են մասսայական, համատարած կոտորածներ։ Այդ եզրակացությանը եկավ մասնավորապես Ս. Պետերբուրգի «Բիրժեվիյե վեդոմոստի» թերթի աշխատակից, հայտնի հրապարակախոս Տ. Օլդենինը, որը 1913 թ. փետրվար-մայիս ամիսներին այցելել էր Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ և անանատես եղել դրանցում կատարվող իրադարձություններին։ Նա հաղորդում էր, որ թուրք բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ, պառլամենտի անդամներ ու տեղական իշխանությունների ներկայացուցիչներ աշխատում են մահմեդական բնակչությանը գրգռել հայերի դեմ և կազմակերպել նոր զանգվածային կոտորածներ, որ իշխանությունների բացահայտ հովանավորությամբ տեղի են ունենում ջարդեր ու կո-

59 էջմիածնի կաթողիկոսական արխիվում պահվում են հարյուրավոր նման խնդրագրեր (տե՛ս ՀՊԿՊ արխիվ)։

ղոպուտ։ Բազմաթիվ հաղորդումներում և հատկապես «Անհետացող Հայաստանը» խորագիրը կրող իր հոդվածում Օլգենինը նկավ այն եզրակացության, որ պատրաստվում է ահավոր ոճիր, սոսկալի ողբերգություն հայերի համար[60]։ Այսպիսով, ակներև է, որ Մեծ Եղեռնի պատճառը ոչ թե 1914 թ. ստեղծված կամավորական ջոկատներն են եղել և ոչ էլ Վանի հայ բնակչության 1915 թ. ինքնապաշտպանական կռիվները, այլ շովինիստ երիտթուրքերի պանթուրքիստական, դավթողական ծրագրերը, որոնք մշակվեցին դեռևս 1910—1911 թթ. և 1913 թ. սկսած վերածվեցին պետական քաղաքականության։

Վերադառնալով մեր հոդվածում քննարկվող հիմնական խնդրին, մենք հարկ ենք համարում նորից ընդգծել, որ բոլոր նրանք, ովքեր խոսում են օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին՝ պատմության բացահայտ կեղծարարներ և ստախոսներ են։ Նրանց քարոզները ոչ մի առնչություն չունեն պատմական ճշմարտության հետ։

Ի վերջո մի քանի խոսք հետևյալ իրողության մասին։ Վերջերս մի շարք թերթերում ու հանդեսներում հրապարակվեցին տեղեկություններ այն մասին, որ թուրքական պաշտոնական անձինք լայն գործունեություն են ծավալում, որպեսզի իրենց կեղծարարական պատմաղետակտն քարոզներին մասնակից դարձնեն նաև եվրոպական ու ամերիկյան պատմաբաններին։ «Կալիֆորնիա Կուրիեր» թերթը, օրինակ, հենվելով հավաստի տվյալների վրա դրել է, որ Թուրքիայի դեսպանությունը ԱՄՆ-ում համառորեն փորձեր է կատարում դրամական միջոցներ տրամադրել ամերիկյան համալսարանների այն ամբիոններին, որոնք կհամաձայնվեն հերքել հայերի կոտորածների և, մասնավորապես, 1915—1916 թթ. ցեղասպանության փաստը։ Բարեխիղճ գիտնականներն, իհարկե, մերժել են նման առաջարկները, բայց դտնվել են նաև այնպիսիք, որոնք ընդունելով առաջարկված դոլլարների փաթեթները, կատարում են պատվերը։

Սուրսեն են վարվել, օրինակ, Կալիֆորնիա համալսարանի Բերքլիի մասնաճյուղի մի շարք ղեկավար աշխատողներ։ Ավելին, նրանք պարտավորվել են դրել նաև այն մասին, որ Թուրքիան «ԱՄՆ-ի դաշնակից լինելուց բացի, առաջատար դեր է կատարում նաև ասիական և եվրոպական քաղաքակրթությունների վարգացման գործում» (տե՛ս «Ազգ», 1998, № 48)։ Բնորոշ է, որ ամոթալի գործարքի մեջ մտած այդ մարդիկ ցանկություն են հայանում, որ ԱՄՆ-ի հետ միասին Թուրքիան այսօր էլ իր «քաղաքակրթական միսիան» կատարի ամբողջ Կովկասում։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մեր պատմաբանների կարևոր խնդիրներից մեկը պետք է լինի քուլազերծ անել պատմության կեղծարարներին։

---

60) Ա. Հ. Զաքարյան. Ռուս հրապարակախոս Տ. Օլգենինը Հայաստանի և Հայկական Հարցի մասին. տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 4 (127)։

О «ЦИВИЛИЗАТОРСКОЙ МИССИИ» ОСМАНСКОГО ГОСУДАРСТВА

Академик НАН РА М. Г. НЕРСИСЯН

Резюме

Турецкие фальсификаторы истории приложили большие усилия, чтобы «научно» обосновать ими же придуманную легенду о том, что будто бы Османское государство было одним из самых цивилизованных государств мира, что будто турецкие султаны распространяли цивилизацию во многих странах, даровали народам свободу, устанавливали мир и законность в их странах, что якобы в Турции были идеальные порядки, что султанское государство распространяло передовые идеи и так далее. Более того. Немало историков без малейшего стыда утверждали, что первые «факелы культуры» были зажжены именно турками. Эти нелепые мысли в той или иной форме высказывали многие высокопоставленные пантюркисты, военные деятели, националистически настроенные публицисты и другие. Но все это постыдная ложь. Как показывают исторические факты, Османское государство было весьма отсталой военно-феодальной деспотией. Турецкие султаны и представители феодальной верхушки основным источником своего дохода делали грабительские походы, войны, разорение захваченных стран, массовый угон пленных, насильственный сбор разных тяжелых налогов. В статье приводятся многочисленные факты и свидетельства, в том числе сообщения турецких летописцев об ужасающем варварстве и злодеяниях османских тиранов. Не случайно, что об этом писали многие выдающиеся ученые, писатели, востоковеды и другие авторы. К. Маркс, например, отмечал, что турецкие султаны «предавали огню и мечу города и села, свирепствовали как каннибалы». В. Гладстон писал, что османцы повсюду, где появлялись, «оставляли глубокий кровавый след, и на всей подвластной им территории исчезала цивилизация». Эту же мысль высказали Виктор Гюго, Н. Г. Чернышевский и другие. Историки-специалисты показали, что османское иго было подлинной катастрофой для всех захваченных султанами стран. Османский деспотизм продолжал свое варварство также в XIX—начале XX вв. Известно, что в крови было потоплено национально-освободительное движение, развернувшееся в Сербии, Греции, Боснии, Герцеговине и Болгарии. В 1890-х годах свирепый деспот султан Абдул Гамид II организовал геноцид армян в Западной Армении и по всей империи. В 1915—1916 гг. был совершен новый чудовищный геноцид западных армян. Пришедшие к власти иттихадисты (младотурки) уничтожили около полутора миллиона армян, Западная Армения превратилась в дымящуюся пустыню. Такова «цивилизаторская миссия» Османского государства.

ON THE „CIVILIZING MISSION" OF THE OTTOMAN GOVERNMENT

Academician of the NAS of the RA M. G. NERSISSIAN

Summary

The Turkish falsificators of history made big efforts to justify scientifically the legend thought of themselves as if the Ottoman empire was one of the most civilized governments in the world, as if the Turkish sultans spread civilization in many countries, donated liberty to people, established peace and legality in their countries. The legend also states that there were ideal orders in Turkey and that the sultan government spread progressive ideas and etc. Even more. Quite a number of historians stated without any little shame that the first „jets of culture" were burnt by the Turks. These nonsensical thoughts were expressed by many panturks of high

rank, military figures and by publicists nationalistically disposed. But all these are shameless lies. Based on historic facts the Ottoman government was thoroughly an outdated military-feudal despotism. The predatory marches and wars, the ruining of the captured countries, the mass drive of prisoners and the forcible collection of various heavy taxes were the main source of the income of Turkish sultans and of the representatives of feudal ruling cliques. The article involves a great number of facts, evidences and the communications of the Turkish chroniclers about the terrible barbarism and evil deeds of the Ottoman tyrants. It is not casual that many outstanding scientists, writers, orientalists and other authors have written about it. For instance, Karl Marx mentioned that the Turkish sultans „gave the cities and villages to fire and sword, raged as cannibals". W. Gladston wrote that the Ottomans anywhere appeared „left a deep bloody tracks and that civilization disappeared in the territories they ruled". The same idea was also expressed by Victor Hugo, N. G. Chernishevsky and by others. The historians-specialists showed that the Ottoman yoke was really a catastrophe for all the countries captured by sultans. The Ottoman despotism continued its barbarism in the XIX and at the beginning of the XX centuries. It is known that the national-liberative movements in Serbia, Greece, Bosnia, Herzegovina and Bulgaria were sunk in blood. In 1890s the ferocious despot sultan Abdul Hamid II organized the genocide of the Armenians in Western Armenia and in the whole empire. In 1915—1916 a new monstrous genocide of Western Armenians was organized. Receiving power the Ittihadists (Young Turks) killed about one and half million Armenians and Western Armenia became a smoking desert. Such was the „civilizing mission" of the Ottoman government.